2. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 82 շենքի թիվ 1 բնակարանի բնակիչ Վարդուհի Հայրապետյանի կողմից ինքնակամ կառուցված Հրազդան քաղաքի Հայ ֆիդայիների փողոց 8/4 հասցեում գտնվող 97.80քմ արտաքին մակերեսով բնակելի նպատակային նշանակության տնտեսական շինությունը, 0.87քմ և 3.64քմ մակերեսներով բնակելի նպատակային նշանակության աստիճանավանդակները, 20.07քմ մակերեսով բնակելի նպատակային նշանակության պարիսպը ճանաչել օրինական:

3.Տնտեսական շինության, աստիճանավանդակների, պարսպի և դրանց սպասարկման ու պահպանման համար նախատեսված 436.3քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

17 փետրվարի 2023թ.
ք.Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 փետրվարի 2023 թվականի N 158

**ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 08-Ի N 115
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հրազդան համայնքի ղեկավարի 2023 թվականի փետրվարի 08-ի «Փոխադրամիջոցի գույքահարկի գումարը վերադարձնելու մասին» N 115 որոշման վերնագրում «Փոխադրամիջոցի գույքահարկի» բառերը փոխարինել «Համայնքային սեփականություն համարվող հողի վարձավճարի» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



17 փետրվարի 2023 թ.
ք. Հրազդան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 փետրվարի 2023թվականի N 159

ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ
ԳՈՒՄԱՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 252-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 3-ի N 920-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածով և հիմք ընդունելով Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Միկրոշրջան թաղամասի 205 շենքի 16 բնակարանի բնակիչ Ռոման Օհանյանի լիազոր անձ Արտաշես Օհանյանի 2023թ. փետրվարի 16-ի Կ-408 դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հրազդանի համայնքապետարանի 900125001025 հաշվեհամարին որպես փոխադրամիջոցի համար գույքահարկ վճարված գումարից 92050 /իննսուներկու հազար հիսուն դրամ/ դրամը հետ վերադարձնել Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Միկրոշրջան թաղամասի 205 շենքի 16 բնակարանի բնակիչ Ռոման Օհանյանին՝ առաջացած գերավճարների չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

17 փետրվարի 2023թ.
ք.Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 փետրվարի 2023թվականի N 160

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի
9-րդ հոդվածի 5-րդ մասով, 16-րդ հոդվածով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

- 1.«Հրազդանի Երվանդ Քոչարի անվան մանկական արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2023 թվականի մարտի 23-ին՝ ժամը 11:00-ին, հայտարարել մրցույթ՝ համաձայն հավելված N1-ի:
- 2.«Հրազդանի թիվ 4 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2023 թվականի մարտի 23-ին՝ ժամը 15:00-ին, հայտարարել մրցույթ՝ համաձայն հավելված N2-ի:
- 3.Հաստատել մրցույթների հայտարարությունները՝ համաձայն N3, 4 հավելվածների:
- 4.Աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել հայտարարությունների հրապարակումը:
- 5.Մրցույթների նախապատրաստական աշխատանքների կատարումը վերապահել Հրազդան համայնքի ղեկավարի օգնական Ադրիանա Գալստյանին:
- 6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

/ **ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

21 փետրվարի 2023թ.
ք.Հրազդան



Հավելված N 1

Հրազդան համայնքի ղեկավարի

2023 թվականի փետրվարի 21-ի

N 160 որոշման



ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՂ ԱՌԵՎՈՐԱՅԻՆ ԳԱԶԱՆԳԵՐՊՈՎԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՅՈՒՆ

ՀՀ	ՀՈԱԿ-ի անվանումը	Անվանումը
1	2	
1	«Հրազդանի Երվանդ Քոչարի անվան մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ	Տնօրեն

Հավելված N 2

Հրազդան համայնքի ղեկավարի

2023 թվականի փետրվարի 21-ի

N 160 որոշման



ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՄ, ԳԱԶԵՎԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ

ՀՀ	ՀՈԱԿ-ի անվանումը	Անվանումը
1	2	
1	«Հրազդանի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ	Տնօրեն



ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ «Հրազդանի Երվանդ Քոչարի անվան մանկական արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար:

ՀՈԱԿ-ի փնտրենը՝

- ա) իրականացնում է ՀՈԱԿ-ի ընթացիկ գործունեության ղեկավարումը.
- բ) պատասխանատու է կադրերի ընտրության Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի պահանջների պահպանման համար, ինչպես նաև օրենքով և համապատասխան կազմակերպության կանոնադրության սահմանված այլ պարտավորությունների ապահովման համար.
- գ) լիազոր մարմին է ներկայացնում ֆինանսատնտեսական հաշվետվությունը, հաջորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը.
- դ) կազմում է ՀՈԱԿ-ի հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և ներկայացնում համապատասխան լիազորված մարմնի հաստատմանը.
- ե) իրականացնում է օրենքով և կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

Մրցութին մասնակցելու իրավունք ունեն՝

Մրցութին մասնակցելու իրավունք ունեն տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացիները, ովքեր ունեն՝

- 1) բարձրագույն կրթություն.
- 2) հանրային ծառայության առնվազն հինգ տարվա ստաժ կամ հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ:
- 3) տնօրենի պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, համապատասխան ոլորտի Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր):
2. Տնօրենի ընտրության լրացուցիչ պայմաններն են՝
- 1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- 2) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.
- 3) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
- 4) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ.
- 5) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.
- 6) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

Մրցութին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝

- 1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
- 2) տառապում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի

փետրվարի 15-ի թիվ 98-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով.

3) օրենքի խախտմամբ չի անցել ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն.

4) դատապարտվել է հանցագործության կատարման համար, և նրա դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

5) զրկվել է որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից, կամ որին օրենքի համաձայն արգելվել է որոշակի պաշտոններ զբաղեցնել.

6) ներկայացրել է փաստաթղթեր, որոնք կեղծ են, լրիվ չեն կամ թերի են.

7) 65 տարին լրացած քաղաքացիները:

Մրցույթը կկայանա 2023 թվականի մարտի 23-ին ժամը 11:00-ին Հրազդանի համայնքապետարանի վարչական շենքում /ք. Հրազդան, Կենտրոն, Սահմանադրության հրապարակ 1, վարչական շենք 5-րդ հարկ/:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար դիմող քաղաքացիները Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմ պետք է ներկայացնեն՝

- դիմում.
- մեկ լուսանկար՝ 3x4 չափսի.
- քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին.
- ինքնակենսագրություն.
- անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները.
- տեղեկանք՝ մշտական բնակության վայրից.
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով, կամ անձը հաստատող փաստաթղթով:

Փաստաթղթերն ընդունվում են յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 10⁰⁰-17⁰⁰-ը Հրազդանի համայնքապետարանի շենքում / ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1, վարչական շենք 5-րդ հարկ, հեռախոս՝ 060-70-40-60/:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2023 թվականի մարտի 13-ը ներառյալ:

ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ «Հրազդանի թիվ 4 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար:

ՀՈԱԿ-ի տնօրենը՝

- ա) իրականացնում է ՀՈԱԿ-ի ընթացիկ գործունեության ղեկավարումը.
- բ) պատասխանատու է կադրերի ընտրության Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի պահանջների պահպանման համար, ինչպես նաև օրենքով և համապատասխան կազմակերպության կանոնադրության սահմանված այլ պարտավորությունների ապահովման համար.
- գ) լիազոր մարմին է ներկայացնում ֆինանսատնտեսական հաշվետվությունը, հաջորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը.
- դ) կազմում է ՀՈԱԿ-ի հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և ներկայացնում համապատասխան լիազորված մարմնի հաստատմանը.
- ե) իրականացնում է օրենքով և կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

Մրցութին մասնակցելու իրավունք ունեն՝

Մրցութին մասնակցելու իրավունք ունեն տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացիները, ովքեր ունեն՝

- 1) բարձրագույն կրթություն.
- 2) կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով վերապատրաստված և նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր).
- 3) «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով սահմանված չափանիշները բավարարող անձը.
- 4) իրենց պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, համապատասխան ոլորտի Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր):

2. Տնօրենի ընտրության լրացուցիչ պայմաններն են՝

- 1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- 2) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.
- 3) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
- 4) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ.
- 5) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.
- 6) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

Մրցութին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝

- 1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
- 2) տառապում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի թիվ 98-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով.
- 3) օրենքի խախտմամբ չի անցել ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն.
- 4) դատապարտվել է հանցագործության կատարման համար, և նրա դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

5) գրկվել է որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից, կամ որին օրենքի համաձայն արգելվել է որոշակի պաշտոններ զբաղեցնել:

6) ներկայացրել է փաստաթղթեր, որոնք կեղծ են, լրիվ չեն կամ թերի են:

7) 65 տարին լրացած քաղաքացիները:

Մրցույթը կկայանա 2023 թվականի մարտի 23-ին ժամը 15:00-ին Հրազդանի համայնքապետարանի վարչական շենքում /ք. Հրազդան, Կենտրոն, Սահմանադրության հրապարակ 1, վարչական շենք 5-րդ հարկ/:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար դիմող քաղաքացիները Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմ պետք է ներկայացնեն՝

- դիմում:
- նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր),
- մեկ լուսանկար՝ 3x4 չափսի:
- քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին:
- ինքնակենսագրություն:
- անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները:
- տեղեկանք՝ մշտական բնակության վայրից:
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով, կամ անձը հաստատող փաստաթղթով:

Փաստաթղթերն ընդունվում են յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 10:00-17:00-ը Հրազդանի համայնքապետարանի շենքում / ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1, Վարչական շենք 5-րդ հարկ, հեռախոս՝ 060-70-40-60/:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2023 թվականի մարտի 13-ը ներառյալ:

ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 փետրվարի 2023թվականի N 161

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ
ԳՈՒՅՔԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 10-ի N27 որոշմամբ, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Ամալյա Բարեղամյանի 2023 թվականի փետրվարի 17-ի գրավոր առաջարկը և Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի պետի 2023 թվականի փետրվարի 20-ի 2-20 զեկուցագիրը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող 6.38 տոննա ապամոնտաժված ալյումինե պրոֆիլից շրջանակներով պատուհանները և դռները ուղղակի վաճառքով օտարել անհատ ձեռնարկատեր՝ Ամալյա Նորիկի Բարեղամյանին /ՀՎՀՀ 40572365, հասցե՝ Շահումյան փողոց, Հարավային թաղամաս, 342/1 / մեկ կիլոգրամի համար սահմանելով 530 /հինգ հարյուր երեսուն/ դրամ:
2. Անհատ ձեռնարկատեր Ամալյա Նորիկի Բարեղամյանի հետ կնքել գույքի առավաճառքի պայմանագիր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

/ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



21 փետրվարի 2023թ.
ք.Հրազդան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 փետրվարի 2023թվականի N 162

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի N 252-Ն որոշմամբ հաստատված հավելվածը, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2018 թվականի օգոստոսի 28-ի N 104-Ն որոշման հավելվածը, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի հունվարի 30-ի ի N 08 որոշումը և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Կոտայքի թեմի առաջնորդ Սրբազան Հայր Առաքել Արքեպիսկոպոս Քարամյանի 2023 թվականի հունվարի 16 -ի Ա-81 գրությունը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի «Հրազդան համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 252 որոշմամբ հաստատված բյուջեի հավելվածում 8.4.3.51 «Կրոնական և հասարակական այլ ծառայություններ» ծրագրի «Այլ նպաստներ բյուջեից» 4729 հոդվածով նախատեսված ծախսերից 500 000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ գումար հատկացնել Կոտայքի թեմի սոցիալական աջակցության ֆոնդին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

/ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

21 փետրվարի 2023թ.
ք. Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 փետրվարի 2023թվականի N 163

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի N 252-Ն որոշմամբ հաստատված հավելվածը, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2018 թվականի օգոստոսի 28-ի N 104-Ն որոշման հավելվածը, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի հունվարի 30-ի ի N 09 որոշումը և «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության նախագահ Երվանդ Մխիթարյանի 2022 թվականի դեկտեմբերի 5-ի N Ս-3613 գրությունը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի «Հրազդան համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 252 որոշմամբ հաստատված բյուջեի հավելվածում 8.4.2.51 «Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ» ծրագրի «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» 4819 հոդվածով նախատեսված ծախսերից 2023 թվականի հունվար ամսից դեկտեմբեր ամիսը ներառյալ ամսական 60 000 /վաթսուն հազար/ ՀՀ դրամ գումար հատկացնել «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

/ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

21 փետրվարի 2023թ.
ք. Հրազդան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 փետրվարի 2023թվականի N 164

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի N 252-Ն որոշմամբ հաստատված հավելվածը, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2018 թվականի օգոստոսի 28-ի N 104-Ն որոշման հավելվածը, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի հունվարի 30-ի ի N 09 որոշումը և Հայկական Կարմիր Խաչի ընկերության գործադիր տնօրեն Աննա Եղիազարյանի 2023 թվականի հունվարի 20-ի N Ս-109 գրությունը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի «Հրազդան համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 252 որոշմամբ հաստատված բյուջեի հավելվածում 8.4.2.51 «Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ» ծրագրի 4621 «Ընթացիկ դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններին» հոդվածով նախատեսված ծախսերից 2023 թվականի հունվար ամսից դեկտեմբեր ամիսը ներառյալ ամսական 40 000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ գումար հատկացնել Հայկական Կարմիր Խաչի ընկերությանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

21 փետրվարի 2023թ.
ք.Հրազդան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 փետրվարի 2023թվականի N 165



ՈՐՈՇՈՒՄԸ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԶԷ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 փետրվարի 2023թվականի N 166

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի N 208-Ն որոշման հավելվածը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1.Տրամադրել թույլտվություններ՝ համաձայն հավելվածի.

1)օրենքով նախատեսված դեպքերում համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի՝ 10 /տասը/ հատ,

2)օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի՝ 8 /ութ/ հատ,

3) հանրային սնունդ՝ 3 /երեք/ հատ,

4)արտաքին գովազդի տեղադրում՝ 5 /հինգ/ հատ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



21 փետրվարի 2023թ.
ք.Հրազդան



Հավելված
Հրապարակման համայնքի ղեկավարի
2023 թ. փետրվարի 21-ի
N 166 որոշման

ՑՈՒՑԱԿ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

Հ/Հ	Իրավաբանական անձի անվանումը/անուն, ազգանուն/ կամ կազմակերպչորակ ական տեսակը	Իրավաբանական հասցե	Գործունեության հասցե	Տեղական տուրքի տեսակը	Շինության տեսակը, մակերեսը՝ քառ/մ	Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը
1.	ԱՁ Սարգիս Գրիգորյան	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 219/24	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 242/3	ոգելից և ակտիոլային խմիչքների վաճառք	մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի 1-ին եռամսյակի համար
2.	ԱՁ Սարգիս Գրիգորյան	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 219/24	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 242/3	ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք	մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի 1-ին եռամսյակի համար
3.	ԱՁ Քրիստինե Շահվալարյան	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 218/17	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 14-րդ փ., թիվ 34	ոգելից և ակտիոլային խմիչքների վաճառք	մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի 1-ին եռամսյակի համար
4.	ԱՁ Քրիստինե Շահվալարյան	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 218/17	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 14-րդ փ., թիվ 34	ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք	մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի 1-ին եռամսյակի համար

5.	ԱՁ Անահիտ Խոջայան	Ք. Երևան, Աջափնյակ 16թ 33/22	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 26-րդ 55, 1-ին հարկ	ոգելից և ավերիության խմիչքների վաճառք	մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի 1-ին ետամսյակի համար
6.	ԱՁ Անահիտ Խոջայան	Ք. Երևան, Աջափնյակ 16թ 33/22	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 26-րդ 55, 1-ին հարկ	ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք	մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի 1-ին ետամսյակի համար
7.	ԱՁ Գագիկ Սահակյան	Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս 37/15	Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս 37 շենքին հարող տարածք	ոգելից և ավերիության խմիչքների վաճառք	մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի 1-ին ետամսյակի համար
8.	ԱՁ Գագիկ Սահակյան	Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս 37/15	Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս 37 շենքին հարող տարածք	ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք	մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի 1-ին ետամսյակի համար
9.	ԱՁ Նաիրա Մխիթարյան	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 113/30	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 8-րդ փ , թիվ 2	արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք	մինչև 26 քառ/մ, ոչ հիմնական շինություն	2023 թվականի 1-ին ետամսյակի համար
10.	ԱՁ Մուշեղ Վարդանյան	Ք. Հրազդան, Շահումյան 158	Ք. Հրազդան, Շահումյան 158	ոգելից և ավերիության խմիչքների վաճառք	մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի 1-ին ետամսյակի համար
11.	ԱՁ Մուշեղ Վարդանյան	Ք. Հրազդան, Շահումյան 158	Ք. Հրազդան, Շահումյան 158	ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային	մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի 1-ին ետամսյակի համար

					արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք		
12.	ԱՁ Աբրահամ Աբելյան	Ք. Հրազդան, Ջրատատ 149	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 26-ս 74 հարող տարածք	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 26-ս 74 հարող տարածք	ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք	մինչև 500 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի 1-ին եռամսյակի համար
13.	ԱՁ Աբրահամ Աբելյան	Ք. Հրազդան, Ջրատատ 149	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 26-ս 74 հարող տարածք	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 26-ս 74 հարող տարածք	ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք	մինչև 500 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի 1-ին եռամսյակի համար
14.	ԱՁ Մարգարիտ Խաչատրյան	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 311/11	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 311, 1-ին հարկ	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 311, 1-ին հարկ	ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք	մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի 1-ին եռամսյակի համար
15.	ԱՁ Մարգարիտ Խաչատրյան	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 311/11	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 311, 1-ին հարկ	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 311, 1-ին հարկ	ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք	մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի 1-ին եռամսյակի համար
16.	<<Վարդենի>> ՍՊԸ	Ք. Երևան, Արաբկիր 7/88	Ք. Հրազդան, Վերին Աղբյուրակ	Ք. Հրազդան, Վերին Աղբյուրակ	ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացման	մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի համար
17.	<<Վարդենի>> ՍՊԸ	Ք. Երևան, Արաբկիր 7/88	Ք. Հրազդան, Վերին Աղբյուրակ	Ք. Հրազդան, Վերին Աղբյուրակ	հանրային սննդի կազմակերպում	մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի համար
18.	ԱՁ Մացակ Խաչատրյան	Ք. Հրազդան, Ջրատատ 151/1	Ք. Հրազդան, Միկրոշրջան Գ-3 թ-ս	Ք. Հրազդան, Միկրոշրջան Գ-3 թ-ս	ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացման	մինչև 500 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի համար

19.	ԱԶ Մացակ հաշատրյան	Ք. Հրազդան, Ջրատատ 151/1	Ք. Հրազդան, Միհր. ոչրջան Գ-3 թ-ս	հանրային սննդի կազմակերպում	մինչև 500 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի համար
20.	<<Ֆուդ էքսպրես>> ՍՊԸ	Ք. Երևան, Դավթաշեն	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ- ս, 4-րդ փ., 20/5- 20/6	ոգելից և ավիոհոլային խմիչքների իրացման	մինչև 500 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի 1-ին եռամսյակի համար
21.	<<Ֆուդ էքսպրես>> ՍՊԸ	Ք. Երևան, Դավթաշեն	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ- ս, 4-րդ փ., 20/5- 20/6	հանրային սննդի կազմակերպում	մինչև 500 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի 1-ին եռամսյակի համար
22.	ԱԶ Եպրաքսիա Միխթարյան	Ք. Արտվան	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ- ս, Մ. Բաղրամյան 5-րդ փ., 1-ին նրբ.	արտաքին գովազդ	2 ք/մ	2023 թվականի փետրվար համար
23.	ԱԶ Սամվել Փուրտոյան	Ք. Երևան, Մալաթիա- Սեբաստիա	Ք. Հրազդան, Ծաղկաձորի օղ. խաչմերուկ	արտաքին գովազդ	3 ք/մ	2023 թվականի համար
24.	<<Դիջիթեյն >> ՍՊԸ	Ք. Երևան, Խակոբի 15/3	Ք. Հրազդան, Օգոստոսի 23, 40/3	արտաքին գովազդ	12,2 ք/մ	2023 թվականի փետրվար համար
25.	<<Դավս Գրոպ >> ՍՊԸ	Ք. Հրազդան, Նարեկացու փ 48	Ք. Հրազդան, Անդրանիկի պ. 8/12	արտաքին գովազդ	5 ք/մ	2023 թվականի փետրվար համար
26.	ԱԶ Ալեք Հովհաննիսյան	Ք. Հրազդան, Միքայելյան 2/32	Ք. Հրազդան, Սպանդարյան 10	արտաքին գովազդ	2 ք/մ	2023 թվականի փետրվար համար
27.	<<ՀրազԶԷԿ >> ԲԲԸ	Ք. Հրազդան, գործարանային 1	Ք. Հրազդան, Ծաղկաձորի օղ. խաչմերուկ	արտաքին գովազդ	236ք/մ	2023 թվականի առաջին կիսամյակի համար



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 փետրվարի 2023թվականի N 167

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 08-Ի N 89
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հրազդան համայնքի ղեկավարի 2022 թվականի փետրվարի 8-ի «Համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N89 որոշման N3, 7, 10, 33, 43, 59 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1, 2, 3, 4, 5, 6 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

22 փետրվարի 2023թ.
ք. Հրազդան



Հաստատված է

Հավելված 1

Հրազդան համայնքի ղեկավարի
2023 թ. փետրվարի 22-ի
N 167 որոշման

Հավելված N 3

Հրազդան համայնքի ղեկավարի
2022 թ. փետրվարի 8-ի N 89 որոշման

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ (ծածկագիր՝ 2.1-2)

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի (այսուհետ՝ բաժնի) պետի պաշտոնն ընդգրկում է համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 1-ին ենթախմբում:

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի պետին «Համայնքային ծառայության մասին» օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված կարգով պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է համայնքի ղեկավարը (այսուհետ՝ համայնքի ղեկավար):

Բաժնի պետը անմիջականորեն ենթակա և հաշվետու է աշխատակազմի քարտուղարին:

Բաժնի պետին անմիջականորեն ենթակա և հաշվետու են բաժնի աշխատողները:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է բաժնի գլխավոր մասնագետը՝ համայնքի ղեկավարի հայեցողությամբ:

Օրենքով նախատեսված դեպքերում բաժնի պետին փոխարինում է համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող՝ սույն պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող անձը, իսկ դրա անհնարինության դեպքում այլ անձը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

1.4. Աշխատակարը

ՀՀ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, Հրազդան, Կենտրոն, Սահմանադրության հրապարակ 1, Վարչական շենք:

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

Բաժնի պետը՝ ա) կազմակերպում է բաժնի աշխատանքները, իր իրավասության շրջանակներում փայխ է հանձնարարականներ բաժնի աշխատակիցներին և վերահսկում է դրանց ժամանակին և պատշաճ որակով կատարումը:
բ) քարտուղարին է ներկայացնում բաժնի աշխատանքային ծրագրերը, անհրաժեշտության դեպքում, բաժնի փազորությունների սահմաններում նախապայտրաստում առաջարկություններ, փողեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, միջնորդագրեր և այլ գրություններ:

գ) անհրաժեշտության դեպքում՝ համայնքի ղեկավարի և (կամ) քարտուղարի համաձայնությամբ և հանձնարարությամբ, մասնակցում է համապատասխան փողական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին, այդ մարմիններից, պաշտոնատար անձանցից, կազմակերպություններից ստանալով բաժնի առջև դրված խնդիրների և գործառույթների իրականացման հետ կապված անհրաժեշտ փողեկարկություն և նյութեր:

դ) ստորագրում է իր և բաժնի անունից պատրաստվող փաստաթղթերը:

ե) համայնքի ղեկավարի և (կամ) քարտուղարի հանձնարարությամբ ապահովում է իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի մշակումը և նյութերի փորձաքննությունը:

զ) քարտուղարին ներկայացնում է առաջարկություններ՝ բաժնի համայնքային ծառայողներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով արտատրավորելու, վերապատրաստելու, խրախուսելու, կարգապահական փողծի ենթարկելու վերաբերյալ, ինչպես նաև արտատրավորումից առնվազն երկու շաբաթ առաջ ներկայացնում է բաժնի համայնքային ծառայողների ծառայողական բնութագրերը:

է) կազմակերպում է քաղաքացիների դիմում-քողղքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում աշխատակազմի քարտուղարին:

ը) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ կազմակերպում է խորհրդակցություններ, հանդիպումներ, ապահովում է այդ խորհրդակցությունների, հանդիպումների արձանագրությունների կազմումը:

թ) ապահովում է բնական միջավայրի պահպանությունը և օգտագործման կարգավորումը:

ժ) իրականացնում է մշակույթի հողերի, գյուղատնտեսական կուլտուրաների աճեցման համար նախատեսված հողերի, գյուղատնտեսական նշանակության վարելահողերի, փնամերձ և այգեգործական հողերի դասակարգումը:
ժա) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ փազորություններ:

Բաժնի պետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով

3. Կազմակերպական շրջանակը

3.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Քաժնի պեւրը՝ ա) բաժնում կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է աշխատանքները:

բ) կապարում է բաժնի գործունեության բնագավառում վարվող քաղաքականության մասով՝ համայնքի ղեկավարի, իսկ համայնքային ծառայության ղեկավարման և կազմակերպման մասով՝ աշխատակազմի քարտուղարի հանձնարարականները:

գ) պատասխանատվություն է կրում օրենքների, համայնքի ղեկավարի որոշումների և կարգադրությունների, այլ իրավական ակտերի պահանջները չկատարելու կամ ոչ պարզաճ կատարելու, կամ լիազորությունները վերազանցելու, բաժնի առջև դրած խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պարզաճ կատարելու համար:

3.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Քաժնի պեւրը՝ ա) լուծում է բաժնի առջև դրված գործառնություններից բխող հիմնախնդիրներ, ընդունում որոշումներ:

բ) Քաժնի պեւրը իրեն անմիջականորեն ենթակա աշխատողներին տալիս է համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ:

3.3. Շփումները և ներկայացուցչությունը

Քաժնի պեւրը՝ ա) աշխատակազմի ներսում իր լիազորությունների շրջանակներում շփվում է համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու անդամների, աշխատակազմում հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց, աշխատակազմի քարտուղարի, ինչպես նաև աշխատակազմի ստորաբաժանումների պեւրերի և այլ աշխատողների հետ:

բ) բաժնի ներսում շփվում է իր լիազորությունների շրջանակներում:

գ) ապահովում է բաժնի փոխհարաբերությունները աշխատակազմի այլ ստորաբաժանումների հետ:

դ) համայնքի ղեկավարի և (կամ) քարտուղարի հանձնարարությամբ աշխատակազմից դուրս իր լիազորությունների շրջանակներում շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ, մասնակցում է Հայաստանի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության այլ համայնքների և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին, ինչպես նաև հանդես է գալիս առաջարկություններով, զեկուցումներով և այլն:

3.4. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Քաժնի պեւրը՝ ա) Համայնքի ղեկավարի և (կամ) քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է տեղական ինքնակառավարման մարմինների և աշխատակազմի ռազմավարական, կազմակերպական և մասնագիտական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ տալու աշխատանքներին:

բ) բացահայտում, վերլուծում և գնահատում է բաժնի առջև դրված գործառնություններից բխող մասնագիտական նշանակության խնդիրները, ինչպես նաև դրանց տալիս է ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ:

4. Պաշտոնին ներկայացվող պահանջները

4.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Քաժնի պեւրն ունի բարձրագույն կրթություն:

4.2. Մասնագիտական գիտելիքները և հմտությունները

Քաժնի պեւրը՝ ա) ունի ՀՀ Սահմանադրության, ՀՀ իրավաբանական, ՀՀ ծրագրային, ՀՀ անվտանգության, ՀՀ ընդերքի մասին օրենսգրքերի, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Հանրային ծառայության մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարչության մասին» օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

բ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը:

գ) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

4.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Քաժնի պեւրը ունի համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ վարչական կամ հայեցողական կամ ինքնավար պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

5. Համայնքային ծառայության դասային աստիճանը

Քաժնի պեւրին օրենքով սահմանված կարգով շնորհվում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 1-ին դասի առաջագար ծառայողի դասային աստիճան:



Հաստատված է

Հավելված 2
Հրազդան համայնքի ղեկավարի
2023 թ. փետրվարի 22 -ի
N 167 որոշման

Հավելված N 7
Հրազդան համայնքի ղեկավարի
2022 թ. փետրվարի 8 -ի N89 որոշման

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Հայաստանի Հանրապետության Կուրայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժնի պետ (ծածկագիր՝ 2.1-6)

Հայաստանի Հանրապետության Կուրայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժնի (այսուհետ՝ բաժին) պետի պաշտոնն ընդգրկում է համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 1-ին ենթախմբում:

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի պետին «Համայնքային ծառայության մասին» օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված կարգով պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է համայնքի ղեկավարը (այսուհետ՝ համայնքի ղեկավար):

Բաժնի պետը անմիջականորեն ենթակա և հաշվետու է աշխատակազմի քարտուղարին:

Բաժնի պետին անմիջականորեն ենթակա և հաշվետու են բաժնի աշխատողները:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է բաժնի պետի տեղակալը՝ համայնքի ղեկավարի հայեցողությամբ:

Օրենքով նախատեսված դեպքերում բաժնի պետին փոխարինում է համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող՝ սույն պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող անձը, իսկ դրա անհնարինության դեպքում այլ անձը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

1.4. Աշխատավայրը

ՀՀ Կուրայքի մարզ, Հրազդան համայնք, Հրազդան, Կենտրոն, Սահմանադրության հրապարակ 1, Վարչական շենք:

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

Բաժնի պետը՝

ա) կազմակերպում է բաժնի աշխատանքները, իր իրավասության շրջանակներում տրամադրում է հանձնարարականներ բաժնի աշխատակիցներին և վերահսկում է դրանց ժամանակին և պատշաճ որակով կատարումը:

բ) քարտուղարին է ներկայացնում բաժնի աշխատանքային ծրագրերը, անհրաժեշտության դեպքում, բաժնի լիազորությունների սահմաններում նախապատրաստում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, միջնորդագրեր և այլ գրություններ:

